ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԴԵՄ (VI ԴԱՐ)

Վ. Կ. ԻՍԿԱՆՅԱՆ

Պարսկաստանի դեմ Արևելյան Հայաստանի ապստամբության և պարսկա-բյուզանդական պատերազմի (572—590) առաջացման գործում կարևոր դեր է խաղացել հայ-բյուզանդական դաշինքը, որից թեև մեծ չափով շահել է կայսրությունը, բայց այն միանգամայն կորստաբեր է եղել հայ ժողովրդի համար։ Պատերազմը, որը տևել է գրեթե երկու տասնամյակ, անթիվ զոհեր է խլել և անչուր ավերածություններ գործել Հայաստանում, ծանր հետևանքներ թողնելով երկրի պատմական բախտի վրա։

Հուստինիանոս կայսրը (527—565) ծանր ժառանգություն էր թողել իր հաջորդներին՝ ընդարձակ սահմաններով մի երկիր, բայց ֆինանսական ու ռազմական տեսակետից ուժասպառ եղած մի պետություն, որը գտնվում էր սնանկացման և կործանման եզրին[1]։ Նրա հաջորդ Հուստինոս Բ-ն (565—578) ստիպված հրաժարվեց արտաքին թշնամիներից դրամով փրկագնվելու իր նախորդի քաղաքականությունից և դադարեցրեց դրամական նպաստի վճարումը պարսիկներին, արաբներին, ավարներին և հոներին։ Սակայն դա չթեթևացրեց Բյուզանդիայի դրությունը ոչ Արևմուտքում և ոչ էլ Արևելքում։ Այստեղ խիստ սրվում են հակասությունները Պարսկաստանի հետ գլխավորապես այն պատճառով, որ կայսրությունը որոշում է պարսիկներին այլևս չվճարել 562 թ. պայմանագրով նախատեսված ամենամյա 500 լիտր ոսկին։ Անխուսափելի է դառնում պատերազմը։ Բայց կայսրությունը, զուրկ լինելով անհրաժեշտ քանակի զինվորական ուժերից, գործի է դնում իր փորձված դիվանագիտությունը և Պարսկաստանի հարևան ու թշնամի ժողովուրդներից նրա դեմ կազմակերպում հարձակողական մի ընդհանուր ճակատ։

Կայսրության կազմած ծրագրի համաձայն Պարսկաստանը ջախջախվելու էր Միջին Ասիայից՝ թուրքերի և արևմուտքից՝ բյուզանդական ուժերի հարձակումից։ Թուրք հորդաները իրոք վիթխարի ուժ էին, բայց Բյուզանդիան չուներ անհրաժեշտ քանակի բանակ։ Ուստի նա նախատեսում է իր զինվորական ուժերի պակասը լրացնել պարսիկների դեմ պատերազմին մասնակից դարձնելով անդրկովկասյան ժողովուրդներին, մասնավորապես հայերին։ Ահա թե

---

[1] Ф. И. Успенский, История Византийской империи, т. 1, ч. 2, էջ 608։ М. В. Левченко, История Византии, М.—Л., 1940, էջ 100։ Н. Пигулевская, Византия и Иран на рубеже VI—VII веков, М.—Л., 1946, էջ 58։

[2] Theophylacti Simocattae, Historia, Bonnae, 1834, էջ 133։ Տե՛ս նաև Theophanis, Chronographia, t. I, Bonnae, 1839, էջ 375։

[3] Менандр Византиец (см. «Византийские историки», СПб. 1860), էջ 398—399։

ինչու կայսրությունը դաշնակցում է Պարսկաստանի դեմ ապստամբություն նախապատրաստող հայերի հետ։

Բյուզանդիան այդ ժամանակ Արևելյան Հայաստանում պարսիկների դեմ ձգտում է օգտագործել իր համար խիստ կարևոր երկու հանգամանք՝ տերիտորիա, մոմենտը և ազատագրական շարժումը։ Հայտնի է, թե Հայաստանը ստրատեգիական, տնտեսական ու քաղաքական ինչ հսկայական նշանակություն է ունեցել Բյուզանդիայի և Պարսկաստանի համար։ Կայսրությունը, սակայն, տվյալ շրջանում պարսիկների դեմ ավելի շատ ձգտում էր օգտագործել հայերի նոր ապստամբությունը։ Դրա ապացույց է այն փաստը, որ հետագայում պարսիկների հետ վարած հաշտության բանակցություններում բյուզանդացիները հաճախ համաձայնվում են նրանց վերադարձնել Արևելյան Հայաստանն ու Իբերիան, պայմանով, որ Պարսկաստանը հրաժարվի իրենց նկատմամբ ունեցած դրամական պահանջներից[4]։ Հայաստանի և Վրաստանի մշտատև գրավումը այդ ժամանակ դուրս է եղել կայսրության քաղաքականությունից[5]։ Սպառնալով գրավել Արևելյան Հայաստանը, Բյուզանդիան նպատակ է ունեցել ստիպել Պարսկաստանին հրաժարվելու իրենից գանձվող ամենամյա դրամից։ Նա իր շահերից բխող այս կարևոր խնդրին էլ ծառայեցրել է հայ-բյուզանդական դաշինքը։ Կայսրությունն իր գործակալների միջոցով նախօրոք ստույգ ու անհրաժեշտ տվյալներ էր հավաքել այն մասին, որ պատերազմի դեպքում Պարսկաստանի դեմ դուրս կգան նրան հարևան ու թշնամի շատ ժողովուրդներ, այդ թվում պարսիկներին հպատակ հայերը[6]։

Արևելյան Հայաստանում Սուրեն մարզպանի (564—572) օրոք նորից սաստկացել էին պարսկական ճնշումները, անխուսափելի դարձնելով ապըստամբությունը։ Բայց շարժման ղեկավար նախարարները, ինչպես նախորդ ելույթների ժամանակ, գտնում էին, որ հզոր Սասանյան Պարսկաստանի դեմ անհրաժեշտ էր ստանալ նաև որևէ այլ պետության պաշտպանությունը։ Այդպիսի պայմաններում հայերը սովորաբար կողմնորոշվել են դեպի Բյուզանդիա, և հավատի ընդհանրությունը՝ քրիստոնեությունը, դարձել է կռապաշտ պարսիկների դեմ հայ-բյուզանդական դաշնակցության գաղափարական հիմնավորման միջոց։ Հուստինոս Բ-ն, ինչպես վկայում է պատմիչը, հայերին դույց տված իր պաշտպանությունը պատճառաբանում էր նրանով, որ նրանք «իր դավանակիցներն» են[7]։ Նույն կայսրը, սակայն, Պարսկաստանի դեմ դաշնակցել էր նաև թուրքերի, արաբների ու հարեշների հետ, որոնք ոչ մի առնչություն չունեին քրիստոնեության հետ։ Դժբախտաբար, դեռ այսօր էլ ոմանք շարունակում են միամտորեն կարծել, թե կայսրությունը հայերին պաշտպանել է հենց նրա համար, որ նրանք քրիստոնյաներ էին։ Կայսրության ամբողջ մերձավորարևելյան քաղաքականությունը, այդ թվում նաև Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականությունը, իրականում բխում էր բյուզանդական տիրող ֆեոդալական դասակարգի շահերից, որին փաստորեն ծառայեցվում էին հայերի կրոնական ընդհանրությունն ու ազատագրական շարժումը։

---

4 Менандр Византиец, էջ 427, 429, 440։

5 Կ. Գյուտերբոք, Բյուզանդիան և Պարսկաստան. Վիեննա, 1911, էջ 152։

6 Ф. И. Успенский. История Византийской империи, т. I, ч. 2, էջ 623։

7 Менандр, էջ 404։

8 Ս. Ակինյան, Եղիշե վարդապետ և յուր պատմությունն Հայոց պատերազմի, մաս Դ, Վիեննա, 1960, էջ 303, և այլն։

Պարսկաստանին ռազմական ուժով Մերձավոր Արևելքում կարող էր հակադրվել նրա դարավոր թշնամի Բյուզանդիան։ Հենց այս հանգամանքն էլ հարկադրել է հայերին դիմելու կայսրության օգնությանը։ Վերջինս դեմ չէր դաշնակցել հայերի հետ, քանի որ մտադիր էր խախտել 562 թ. պայմանագիրը։

Արևելյան Հայաստանի ոչ բոլոր հասարակական խավերն ու նախարարական իշխանություններն էին կողմնակից Բյուզանդիայի հետ դաշինքին։ Հայտնի է, որ ապստամբության նախօրյակին Սյունիքն անջատվում է Հայաստանից։ Նրա իշխան Վահանը խոսրով արքայի թույլտվությամբ իր հարկամատյանը Դվինից փոխադրում է Փայտակարան և ենթարկվում Ատրպատականի մարզպանին[9]։ V դարից մինչև VI դարի վերջին քառորդը Սյունիքի նախարարական տունը հանդիսացել է Հայաստանում առաջացած պարսկական կուսակցության ուժեղ ներկայացուցիչը, շատ մոտ պարսկական արքունիքին ու սաստիկ պարսկասեր[10]։ Այստեղից էլ հասկանալի է Սյունիքի հակաբյուզանդական կողմնորոշումը և թշնամանքը դեպի նախապատրաստվող ապստամբությունը, որն ուղղված էր Պարսկաստանի դեմ[11]։

Հովհաննես Եփեսացու ասելով, պարսիկների դեմ ապստամբել և Բյուզանդիայի կողմն էր անցել հայկական մի մարզ, որի բնակչության քանակը հավասար էր 20 հազար մարդու[12]։ Թե որքանով է ստույգ այս տվյալը, չենք կարող ասել այլ աղբյուրներում ապստամբների քանակի մասին տեղեկություն չունենալու պատճառով։ Այնուամենայնիվ, պատմիչի այդ վկայությունից երևում է, որ Արևելյան Հայաստանի ոչ բոլոր նախարարներն են միացել հայ-բյուզանդական դաշինքին ու ապստամբությանը, կամ շուտով, բացահայտելույթի ժամանակ, արդեն նրանց մի մասը երես է դարձրել շարժումից։ Այլ բյուրների նման և այլ կարգի փաստերը հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակ աշխարհիկ և եկեղեցական հայ ֆեոդալական խավերի մեջ գոյություն են ունեցել բյուզանդական և պարսկական կողմնորոշման խմբավորումներ։ Բյուզանդիայի կողմից Հայաստանում զանազան պարգևների, աստիճանների ու արտոնությունների բաշխումը մի կարևոր միջոց էր սիրաշահելու երկրում կայսրության հենարան կազմող և Պարսկաստանին թշնամի հայ ֆեոդալական շրջաններին[13]։ Վերջիններս էլ կազմակերպել են ապստամբությունը և երկիրը կողմնորոշել դեպի Բյուզանդիա։ Նրանք, օգտվելով պարսկա-բյուզանդական սրված հակասություններից, բանակցությունների համար պատվիրակություն են ուղարկում Կ. Պոլիս Հուստինոս Բ կայսեր մոտ։ Հայ-բյուզանդական մերձեցման գործում, անկասկած, խոշոր դեր է խաղացել Հուստինիանոս կայսեր ազգական Գերմանոսի որդի Հուստինիանոսը, որը կայսրության արևելյան զորահրամանատարն էր (magister militum per Orientem)

---

9 Սեբեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 27։

10 Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, Երևան, 1947, էջ 51, 53, 58։

11 Հայտնի է, որ մարզպան Սուրենի սպանությունից հետո, նախարարների ապստամբության և Պարսկաստանի դեմ մղած պատերազմի ժամանակ Սյունիքի իշխան Փիլիպպոսը զորքով արշավում է Հայաստան և պատերազմում հայ-բյուզանդական միացյալ ուժերի դեմ (Տե՛ս Սեբեոս, էջ 30)։ Այս դեպքը ևս ցույց է տալիս, որ Սյունիքի անջատվելը Սուրեն մարզպանի գործունեությամբ պայմանավորված չի եղել։

12 Տե՛ս Н. В. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР. Москва—Ленинград, 1941, էջ 113, 130։

13 Նույն տեղում, էջ 93։

և նստում էր Արևմտյան Հայաստանի սահմանում գտնվող Թեոդոսուպոլիս բաղաքում։ Նա կատարել է յուրատեսակ միջնորդի դեր Արևելյան Հայաստանի նախարարների և բյուզանդական արքունիքի միջև տեղի ունեցող հարաբերություններում[14]։ Պատահական չէ, որ Վարդան Մամիկոնյանը սպանված պարսիկ մարզպան Սուրենի գլուխն անմիջապես ուղարկում է Հուստինիանոսին[15]։ Մարզպանի գլխատումը իրականում աղդարարում էր հայերի ապստամբության սկսվելը և պարտավորեցնում կայսրությանը գործողության մեջ գնալու նախօրոք կնքված հայ-բյուզանդական պայմանագիրը։

Հայ-բյուզանդական դաշինքի նախապատրաստական աշխատանքի մասին վկայում է նաև Եվագրը։ Հայերը, գրում է նա, ճնշվելով պարսիկներից, «դաղտնի դեսպաններ ուղարկեցին Հուստինոսի մոտ», որը երբ ընդունեց նրանց խնդրանքը, այն ժամանակ նրանք ապստամբեցին ու սպանեցին պարսիկներին[16]։ Այստեղից պարզ երևում է, որ Կ. Պոլսում հայ-բյուզանդական բանակցությունները տեղի են ունենում ապստամբության նախօրյակին, հավանաբար հայերի նախաձեռնությամբ, որովհետև Գրիգոր Տուրացին ևս վկայում է, որ իրենք՝ պարսկահայերը եկան Հուստինոս կայսեր մոտ, «խնդրելու նրա բարեկամությունը»[17]։ Այդ դեսպանությունը դրով և ընծաներով Հուստինոս կայսեր մոտ է ուղարկել Վարդան Մամիկոնյանը այն բանից հետո, երբ մարզպան Սուրենը սպանել էր իր Մանվել եղբորը[18]։ Նա, անշուշտ, տեղյակ է եղել թուրք-բյուզանդական դաշինքին։

Կ. Պոլսում բանակցություններն ավարտվել են նրանով, որ կնքվել է հայ-բյուզանդական դաշինք, որի մասին աղբյուրներում կան հավաստի տեղեկություններ։ Դեպքերին ժամանակակից պատմիչ Հովհաննես Էպիփանեցին, խոսելով բյուզանդացիների կողմից պարսիկների հանդեպ առաջադրած մեղադրանքների մասին, ասում է. «Մարերը (պարսիկները—Վ. Ի.) ևս պատերազմի հանցանքը դնում էին հռոմների վրա, մեղադրելով նրանում, որ նրանք իրենց հարկատու հայերին, որոնք ուզում էին անջատվել իրենցից և սպանել էին իրենց զորահրամանատար Սուրենին, ընդունեցին իրենց մոտ և նրանց հետ կնքեցին դաշինք»[19]։ Հայ-բյուզանդական դաղտնի դաշինքի գոյության փաստը հաստատում է նաև Հովհաննես Բիկլարեցին[20]։

Արևելյան Հայաստանի և Բյուզանդիայի միջև համագործակցության հաստատման մասին այլ կերպ է հաղորդում Եվագրը։ Հուստինոս կայսրը, նրա ասելով, համաձայնվեց իր մոտ ուղարկված հայ դեսպանության խնդրանքին և «ընդունելով իրեն ուղղված գրության մեջ շարադրված մի քանի պայմանները, հաստատեց դրանք ահավոր երդումներով»[21]։ Սեբեոսը բառացիորեն նույնն է ասում, ինչ Եվագրն ու Էպիփանեցին. «Իսկ առ Հայոց,—գրում է նա,—երդ-

---

[14] E. Stein, Studien zur Geschichte des byzantinischen Reiches, Stuttgart, 1919, էջ 22։

[15] Иоанн Ефесский, էջ 11։

[16] Евагр, Церковная история, Петербург, 1853, էջ 256։

[17] Gr. Turonensis, Historia Francorum, ed. W. Arndt, Hannover, 1884 (Monum. Germ. Hist. script. rer. Meroving. 1), էջ 174։

[18] Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 284։

[19] Historici graeci minores", ed. L. Dindorfius, հատ. I, Lipsiae, 1870, էջ 377—378։

[20] „Monumenta Germaniae historica", t. XI, էջ 211—212։

[21] Евагр, էջ 256։

նոյր թագաւորն Յունաց և հաստատէր... ուխտ»[22]։ Սեբեոսի մոտ ևս հայ-բյուզանդական դաշինքի հաստատումը նախորդում է հայերի բացահայտ ապստամբությանը, որովհետև, ըստ նրա, հայերը կայսեր հետ «ուխտ» կնքելուց հետո են նրանից ստացել օժանդակ զորք և գրավել Դվինը[23]։ Հովհաննես Էպիփանեցու վկայությունից այնպես է հասկացվում, որ հայ-բյուզանդական դաշինքի կնքումը տեղի է ունեցել Սուրեն մարզպանի սպանությունից և ապստամբ հայերի Կ. Պոլիս գնալուց հետո։ Գրիգոր Տուրացին ևս հաղորդում է, որ հայերը կայսեր բարեկամությունն են խնդրել այն ժամանակ, երբ սպանել են պարսից արքայի կողմից Հայաստան ուղարկված և կրոնական բռնադատություն գործադրած պատվիրակությանը։ «Իսկ Հուստինոս կայսեր մոտ,— ասում է պատմիչը,— եկան պարսկահայեր, բերելով մեծ քանակությամբ մետաքսյա գործվածքեղեն, խնդրելու նրա բարեկամությունը և պատմեցին իրենց տանելության մասին պարսկական արքայի դեմ»[24]։

Այսպիսով, ըստ Եվագրի և Սեբեոսի, հայ-բյուզանդական դաշինքի կնքումը տեղի է ունեցել մինչև ապստամբությունը, իսկ ըստ Էպիփանեցու և Գրիգոր Տուրացու ապստամբ հայերի կայսրության կողմը անցնելու ժամանակ։ Մեր կարծիքով պետք է տարբերություն դնել կայսրության և հայերի նախնական գաղտնի բանակցությունների ու պայմանավորվածության (որի մասին խոսում են Եվագրն ու Սեբեոսը) և արդեն ապստամբության ժամանակ կնքված ու պաշտոնապես հրապարակված հայ-բյուզանդական դաշինքի միջև (որի մասին խոսում են մյուս պատմիչները)։ Այդ տեսակետից, մեզ թվում է, իրավացի է Մ. Չամչյանը, երբ գտնում է, որ Վարդան Մամիկոնյանը Հուստինոս կայսեր մոտ երկու անգամ է դեսպանություն ուղարկել. մեկը՝ ապստամբության նախօրյակին, մյուսը՝ մարզպան Սուրենին սպանելուց հետո[25]։ Գաղտնի բանակցությունների ընթացքում, անշուշտ, քննարկվել ու համաձայնեցվել են բոլոր կարևոր հարցերը, իսկ հետագայում, ապստամբության ժամանակ արդեն պաշտոնապես կնքվել ու հրապարակվել է դաշինքը, որը Բյուզանդիային իրավունք է տվել որպես ապստամբ հայերի դաշնակից՝ հանդես գալու Պարսկաստանի դեմ։

Աղբյուրների տվյալները, չնայած նրանց աղոտ ու հակասական բնույթին, հնարավորություն են տալիս որոշելու հայ-բյուզանդական գաղտնի պայմանագրի կնքման տարեթիվը։ Հովհաննես Բիկլարեցին Հայաստանի և Իբերիայի ենթարկումը Բյուզանդիային դնում է 567, իսկ Պարսկաստանի դեմ կայսրության պատերազմի սկիզբը՝ 571 տարեթվերի տակ[26]։ Չնայած այդ ժամանակագրական անճշտությանը, երևում է, որ Բյուզանդիայի հետ նախարարների նախնական համաձայնությունը կայացվել է հայերի ապստամբությունից առաջ, որովհետև այս ապստամբությամբ էլ փաստորեն սկսվել է պատերազմը։ Նախարարները, Եվագրի ստույգ վկայությամբ, կայսեր մոտ դեսպաններ են ուղարկել գաղտնի, Թեոպոլի Գրիգոր եպիսկոպոսի աթոռակալության առաջին տարում[27]։ Թեոփան Բյուզանդացու ասելով՝ Գրիգորը աթոռակալել է

22 Սեբեոս, էջ 27։

23 Նույն տեղում։

24 Gr. Turonensis, էջ 174։

25 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 284։

26 „Monumenta Germaniae historica“, t. XI, էջ 211—212։

27 Евагр, էջ 256։

569 թ. սեպտեմբերից ոչ վաղ մինչև, ամենաուշը՝ 571 թ.։ Հովհաննես Եփեսացին հիշատակում է Բյուզանդիային հայերի հպատակեցման երկու տարբեր տարեթվեր. ըստ մեկի՝ Արևելյան Հայաստանը կայսրությանն է հպատակվել Ալեքսանդրի էրայի 880 թ. (=569—570), իսկ ըստ մյուսի՝ ապստամբ նախարարները եկել և հանձնվել են Հուստինոս կայսրին նրա թագավորության 5-րդ տարում (=570—571) կամ Ալեքսանդրի էրայի 882 թ. (=571)[28]։ Մ. Չամչյանը գաղտնի դաշինքի տարեթիվը համարել է 570-ը[29]։ Է. Շտայնը, աղբյուրների հիշյալ տվյալների հիման վրա, գտնում է, որ Արևելյան Հայաստանի և Բյուզանդիայի միջև գաղտնի դաշնագիրը կնքվել է 570 թ. սեպտեմբերի 1-ի և նոյեմբերի 13-ի միջև[30]։ Չնայած այս վերջին տարեթիվն ընդունվել է պատմագրության մեջ, սակայն, ինչպես տեսնում ենք, այնուամենայնիվ, այն մոտավոր ու պայմանական է և նրա վերջնական ճշտման համար անհրաժեշտ են որոշակի ու արժանահավատ նոր փաստեր։

Ի՞նչ պայմաններով էր կնքվել հայ-բյուզանդական դաշինքը։ Դիմենք աղբյուրներին։ Եվագրը հաղորդում է, որ հայերը «Հուստինոսի մոտ գաղտնի դեսպաններ ուղարկեցին խնդիրքով՝ ընդունել իրենց Հռոմեական կայսրության հպատակության տակ, պայմանով, որ իրենց թույլատրվեր ապատորեն, առանց որևէ արգելքի, կատարել իրենց եկեղեցական արարողությունը։ Հուստինոսը համաձայնվեց դրան և, ընդունելով իրեն ուղղված գրության մեջ շարադրված մի քանի պայմանները, հաստատեց դրանք ահավոր երդումներով»[31]։ Պատմիչի այս վկայությունը, սակայն, միակողմանի է և խիստ թերի. չափից ավելի նշանակություն տալով կրոնական խնդրին, նա չի բերում հայերի կողմից կայսրին ներկայացված «գրության մեջ շարադրված մի քանի պայմանները», որոնք հենց, մեր կարծիքով, կազմել են դաշինքի հիմնական բովանդակությունը և խիստ կարևոր են մեզ հետաքրքրող հարցի պարզաբանման համար։

Հայ-բյուզանդական դաշինքի մասին խիստ համառոտ, բայց վերին աստիճանի ուշագրավ տեղեկություն է հաղորդում Սեբեոսը. «Իսկ առ Հայոց,— ասում է նա,— երդնոյր թագաւորն Յունաց (այսինքն՝ Հուստինոս Բ կայսրը— Հ. Ի.), և հաստատէր զնոյն ուխտ՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց, երանելւոյն Տրդատայ և Կոստանդիանոսի. և տայր նոցա զզաւրսն կայսերական յաւգնութիւն»[32]։

Սեբեոսի վերոհիշյալ վկայությունը, մեզ թվում է, լրացումն է դաշինքի մասին Եվագրի հիշյալ հաղորդածի։ Պատմաբանները տարբեր կերպ են մեկնաբանել դաշինքի մասին աղբյուրներում եղած փաստերն ու հայ-բյուզանդական համագործակցությունը։ Նրանց մի մասի կարծիքով՝ ըստ պայմանագրի, Արևելյան Հայաստանն ուղղակի անցնելու էր կայսրության տիրապետության տակ[33], կամ միացվելու էր նրան, երեք տարով ապատվելով ամեն տեսակի

---

28 Иоанн Ефесский, էջ 113, 130, հմմտ. Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, էջ 89—90։

29 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 283—284։

30 E. Stein, նշվ. աշխ., էջ 22—23։

31 Евагр, էջ 256։

32 Սեբեոս, էջ 27։

33 Մ. Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 564, և հ., Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 206, և այլն։

հարկից[34], մինչդեռ մյուսների ենթադրությամբ՝ վերականգնվեն էր հայոց թագավորական դահը։ Այս կարգի ուսումնասիրողներից առանձնապես աչքի է ընկնում Ի. Շտայնը, որի կարծիքով Կ. Պոլսում հայերին երդումով տրված կայսեր պարտավորությունը՝ պաշտպանելու և վերականգնելու Կոստանդին Մեծի և Տրդատ Մեծի միջև 314 թ. կնքված դաշինքը, ասում է այն մասին, որ մտադրություն է եղել վերականգնելու հայկական թագավորությունը և գահը հանձնելու Վարդան Մամիկոնյանին[35]։ Գերմանական գիտնականի այս ենթադրությունը, ինչպես գտնում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, անհավանական չէ և արժանի է հատուկ ուշադրության[36]։ Ն. Ակինյանը, որն առանձին ուսումնասիրման է ենթարկել Արևելյան Հայաստանի ապստամբության պատմությունը, ընդհակառակն, գտնում է, որ Սեբեոսի վկայությունը նման մեկնության հիմք ծառայել չի կարող և փաստորեն դալիս է այն եզրակացության, որ Արևելյան Հայաստանը դուրս էր գալու պարսկական տիրապետությունից և ենթարկվելու էր բյուզանդական գերիշխանությանը[37]։ Նման մեկնաբանությունը, մեր կարծիքով, հիմնավորված և համոզիչ չէ։ Միամտություն կլիներ կարծել, թե հայերն ապստամբել էին նրա համար, որպեսզի իրենց պարսկական հպատակությունը սոսկ փոխարինեն բյուզանդականով, մանավանդ, որ ինչպես հայտնի էր Արևմտյան Հայաստանի պատմական անցյալից, կայսրության տիրապետությունը ամենևին թեթև չէր պարսկականից։ Ն. Ակինյանը հետագայում ստիպված էր փոխել իր այս կարծիքը[38]։

Այժմ աղբյուրների վկայությունների մասին։ Բյուզանդիան ունեցե՞լ է արդյոք հայկական թագավորությունը վերականգնելու մտադրություն, թե ոչ։ այդ մասին հնարավոր չէ որոշակի ասել, որովհետև Սեբեոսի հիշյալ տեղեկությունը պարզաբանող և հաստատող որևէ այլ աղբյուր մենք չունենք։ Եթե Հուստինոս Բ-ն իրոք համաձայնվել է վերականգնել Կոստանդին Մեծի կնքած նույն դաշինքը և, ինչպես կարծում են, հայկական թագավորությունը. ապա վերջինս եթե ոչ տերիտորիալ տեսակետից, գոնե քաղաքականապես պետք է լիներ Տրդատ Գ-ի նույն սուվերեն պետությունը։ Պատմիչների տեղեկությունները, սակայն, ոչ միայն չեն հաստատում Հայաստանի համար նման դրություն, այլև մեզ հանգեցնում են հակառակ եզրակացության։ Մեջ բերենք աղբյուրներում եղած համապատասխան փաստերը։ Եվագրի վկայությունից արդեն տեսանք, որ Կ. Պոլսում ապստամբ հայերը համաձայնվել էին դառնալ կայսրության ուղղակի հպատակներ։ Բյուզանդիա գաղթածներին կայսրությունը տալիս էր բարձր աստիճաններ, շքեղ տներ, հաստատուն թագավորական ապարանքներ։ «Իսկ նրանց,—շարունակում է Հովհ. Եփեսացին,—որ (իրենց) երկրում էին (այսինքն՝ Հայաստանում—Վ. Ի.), ուղարկվեց շատ ոսկի և աստիճաններ, ինչպես նաև հռոմների կայսեր կողմից զիջվեց երեք տարվա (հարկերը)»[39]։ Այդ ժամկետն անցնելուց հետո, եթե Արևելյան Հա-

34 Ю. Кулаковский, История Византии, т. II, էջ 364։

35 E. Stein, նշվ. աշխ., էջ 24։

36 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 297։

37 Տե՛ս Ն. Ակինյան, Դունոյ 572-ի ապստամբությունը, «Հանդես ամսօրյա», հունվար, 1913, էջ 70, տե՛ս նաև նույնի «Կիւրոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 110։

38 Տե՛ս նրա «Եղիշէ վարդապետ և իւր պատմութիւնն Հայոց պատերազմի», մաս Գ, էջ 65

39 Иоанн Ефесский, էջ 112, 130։

յաստանը գտնվեր բյուզանդական տիրապետության տակ, կայսրության հարկ էր վճարելու։

Հայերի նկատմամբ կայսրության վարած հարկային այս քաղաքականությունը, մեզ թվում է, բխում էր դաշնակցային պարտավորվածությունից։ Վարդան Մամիկոնյանը դրով և նվերներով դեսպանություն ուղարկելով Կ. Պոլիս, ստացվելիք բյուզանդական օգնության դիմաց կայսրին խոստացել է տալ նաև Հայաստանի այն հարկը, որ մինչ այդ վճարվել էր պարսիկներին[40]։ Այս կապակցությամբ վերին աստիճանի հետաքրքիր ու կարևոր է նաև Հովհաննես Բիկլարեցու վկայությունը 571 թ. ապստամբ հայերի վերաբերյալ կայսրության կայացրած պաշտոնական որոշման մասին. «Հուստինոս կայսրը,— ասում է նա,— Հայաստանն ու Իբերիան, որոնք անջատվել էին պարսիկներից, հռոմեական (բյուզանդական—Վ. Ի.) նահանգ հռչակեց»[41]։ Բյուզանդական նահանգ դարձած երկիրը, իհարկե, չէր կարող ոչ անկախ լինել և ոչ էլ, առավել ևս, թագավորություն հանդիսանալ։ Կայսրը, մեզ թվում է, այդ որոշումը հրապարակել է, հիմք ունենալով հայ-բյուզանդական դաշինքը, հակառակ դեպքում հայ նախարարական ուժերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ չէին մասնակցի պարսիկների դեմ սկսված պատերազմին։ Վերջապես, ավելորդ չենք համարում նաև նշելու, որ հետագայում ոչ Հուստինոսը և ոչ էլ նրա հաջորդ կայսրները փորձ անգամ չեն կատարել վերականգնելու հայկական թագավորական գահը, չնայած պատերազմի ընթացքում Արևելյան Հայաստանը հաճախակի անցել է կայսրության ձեռքը, իսկ 591 թ. պարսկա-բյուզանդական պայմանագրով նրա մեծ մասը ուղղակի միացվեց Բյուզանդիային։ Ընդհակառակն, հենց Հուստինոսի և հաջորդ կայսրների ժամանակ տեղի ունեցած պարսկա-բյուզանդական հաշտության բանակցություններում, ինչպես տեսանք վերևում, կայսրությունը Արևելյան Հայաստանը դարձնում է ոտ և տուրի առարկա և համաձայնվում է զիջել այն պարսիկներին, միայն թե չվճարի նախկին ամենամյա դրամը։

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, որ Բյուզանդիան ապստամբ հայերի նկատմամբ ոչ մի պայմանագրով հայկական թագավորությունը վերականգնելու պարտավորություն իր վրա ստանձնած չի եղել։ Պատմական փորձը, ընդհակառակն, ցույց է տալիս, որ նա հայերի նկատմամբ վարել է պետականությունից զրկելու, թույլ ու հնազանդ վիճակում պահելու քաղաքականություն, որը եղել է տրադիցիոն և անփոփոխ։ Սեբեոսի մոտ հիշատակված «ուխտ»-ը ավելի շուտ ունի Պարսկաստանի դեմ ուղղված հայ-բյուզանդական ռազմական դաշինքի հաստատման բովանդակություն (որպիսին պետք է որ եղած լիներ Կոստանդին Մեծի և Տրդատի օրոք), քան հայկական թագավորություն վերականգնելու իմաստ։

Հանրագումարի բերելով աղբյուրների աղքատիկ ու կցկտուր տեղեկությունները, ստանում ենք հետևյալ պատկերը. Արևելյան Հայաստանն ազատվելու էր պարսկական անտանելի դարձած կեղեքումից, կամայական կառավարումից և կրոնական բռնադատությունից։ Հայերը երեք տարով ազատվում էին հարկատվությունից և ձեռք բերում դավանանքի ազատություն։ Այդ բոլորի դիմաց նրանք հպատակվում էին Բյուզանդիային, խոստանում հարկ վճարել

---

40 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 284։

41 „Yohannis Biclarensis chronica", էջ 212։

ապագայում և զինվորական օգնություն ստանում կայսրությունից Պարսկաստանի դեմ։ Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորումը Բեկուզ մեկ նվաճողի՝ բյուզանդական տիրապետության տակ հույս էր ներշնչում հայերին միավորված ուժերով ավելի հաջող պայքար մղելու օտար ղերիշխանության դեմ իրենց անկախության վերականգնման համար։

Անհրաժեշտ է նշել, որ հայերի նկատմամբ կայսրության ստանձնած պարտավորությունները փոխվել են։ Դեպի Հայաստան պարսկական արշավանքների ժամանակ, երբ ապստամբության ղեկավարները ապաստանում են Կ. Պոլսում, Բյուզանդիան նրանց հանդեպ ստանձնում է նոր, դաշինքը լրացնող պարտավորություններ։ Այդ մասին կարևոր ու հետաքրքրական տեղեկություն է հաղորդում Մենանդրոսը։ «Հուստինիանոս (պետք է լինի՝ Հուստինոս— Վ. Բ.) կայսրը,— ասում է նա,—գաղթած պարսկահայերին և իբերներին երդումով խոստացավ, որ ինքը կգործադրի իրենից կախված բոլոր միջոցները նվաճելու այն երկիրը, որտեղ նրանք են ծնվել, իսկ եթե նա բնավ ի վիճակի չլինի պատերազմ մղելու մինչև վերջ, ապա ծայրահեղ դեպքում երբեք չի հանձնի ոչ ապստամբության հանցավորներին, ոչ էլ նրանց ազգականներին, մի խոսքով նրանցից ոչ մեկին, ովքեր կցանկանային լինել հոռոմական տիրության իշխանության տակ»[42]։

Ինչպե՞ս կատարեց կայսրությունը հայ-բյուզանդական դաշինքով ստանձնած պարտավորությունները։ Սեբեոսի վկայությունից երևում է, որ Հուստինոս Բ-ն ապստամբ հայերին անմիջապես ցույց է տվել զինվորական օգնություն։ Ավելորդ չենք համարում պատմիչի տեղեկության այդ հատվածը մեջ բերել ամբողջությամբ. «Իսկ առ Հայոց երդեալոյր թագաւորն Յունաց, և հաստատէր զնոյն ուխտ՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց, երանելւոյն Տրդատայ և Կոստանդիանոսի. և տայր նոցա զզաւրսն կայսերական յաւգնութիւն։ Եւ նոցա առեալ զզաւրն՝ դիմեցին ի վերայ քաղաքին Դրւնայ և պաշարեալ կործանեցին ի վայր, և հալածեցին զզաւրն Պարսից որ ի նմա կային[43]։ Բյուզանդական օգնությունը, ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել դաշինքը կնքելուց հետո։ Հայերը, կայսեր հետ պայմանագիր կնքելով, օգնական զորք են ստանում նրանից և գրավում Դվինը, որից հետո միայն ծայր են առնում պարսկական արշավանքները[44]։ Միխայել Ասորին ևս հաղորդում է, որ ապստամբ հայերը բյուզանդական զորքի օգնությամբ են ջախջախել պարսիկներին. «Խոսրով թագաւորն Պարսից սկսաւ նեղել զՀայս՝ երկրպագել կրակի. և ապստամբեցին Հայք և խնդրեցին օգնութիւն ՝ի Յուստիանոսէ զօրք և յաղթեցին պարսից և հալածեցին յաշխարհէն։ Եւ առաքեաց Խոսրով առ Յուստիանոս՝ մի՛ օգնել Հայոց, և տալ հրաման դառնալոյ ՝ի Պարսիկս և կամ տալ զհարկն[45]։ Խոսրովի պահանջը նշանակում է, որ Հուստինոսը իրոք օգնել է ապստամբ հա-

42 Менандр, էջ 428։

43 Սեբեոս, էջ 27։

44 Սիմեոն Ապարանցին (XVI դ). որն իր չափածո «Վիպասանության» մեջ օգտվել է Սեբեոսի «Պատմության» հնագույն օրինակից, ասում է, որ Վարդան Մամիկոնյանը, սպանելով Սուրեն մարզպանին, գնում է Հուստինոս կայսեր մոտ և «Զօրօք բազմօք գայ ի Դրւին»։ Տե՛ս Սիմեոն Ապարանցի, Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 74։

45 Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1871, էջ 260։

յերին։ Քիչ ավելի ուշ, նույն ժամանակագրի ասելով, զորք ստանալու նպատակով Կ. Պոլիս է գնացել կաթողիկոսը[46]։

Բյուզանդական զինվորական ուժերը, հայերի հետ միացած, Հայաստանում դրծել են պարսիկների դեմ ապստամբության ժամանակ և դրանից հետո։ Բայց Պարսկաստանի դեմ մղվելիք պատերազմին Բյուզանդիան ամենևին նախապատրաստված չէր և, բնականաբար, չէր կարող անհրաժեշտ քանակի զորք տրամադրել ապստամբ հայերին։ Հուստինոսը, ասում է Եվագրը, խախտելով խաղաղությունը, «պատերազմի չէր պատրաստվում, այլ Եվփրվել էր սովորական շռայլության և սեփական հաճույքի համար մոռացել էր մնացած ամենն ինչի մասին»[47]։ Այդ հանգամանքը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ կայսրությունը, չունենալով անհրաժեշտ քանակի միջոցներ ու զինվորական ուժեր, իր հույսը դլխավորապես դրել էր Պարսկաստանի դեմ թուրքերի նախատեսվող հարձակման վրա, իսկ ապստամբ հայերը՝ բյուզանդական օգնության վրա։ Հայ-բյուզանդական դաշինքը, վերջին հաշվով, հենվում էր թուրք-բյուզանդական դաշնագրի վրա։ Բայց Պարսկաստանի վրա թուրքերի սպասվող հարձակումը տեղի չունեցավ. դա խառնեց թե՛ կայսրության, թե՛ ապստամբ հայերի հաշիվները և պարսիկները, ի վերջո, կարողացան վերստին գրավել Արևելյան Հայաստանը (577)։ Կայսրությունը ապստամբ հայերին տվել էր ռազմական օգնության շռայլ խոստումներ, սակայն բյուզանդական զինվորական ուժերի թուլությունը անհնարին դարձրեց կատարել հայերին տրված խոստումը[48]։ «VI դարի երկրորդ կեսին,— ասում է պրոֆ. Ն. Պիգուլևսկայան.— Բյուզանդիան փորձեց Իրանին շրջանցել նաև դիվանագիտական ճանապարհով։ Հայաստանին մշտապես ցույց էին տալիս հովանավորություն, բայց մի անգամ չէ, որ դավաճանում և խարում էին նրան»[49]։

Այժմ Արևելյան Հայաստանի ապստամբության ընթացքի մասին։ Նախորոք ասենք, որ ապստամբությունը պարսիկների կողմից չի ճնշվել արյունահեղությամբ, ինչպես սովորաբար պատկերվում է պատմագրության մեջ[50]։ Ապստամբության ճնշման դեպքում, բնական է, ապստամբների և պարսիկների միջև պետք է տեղի ունենային զինված բնդհարումներ, ճակատամարտ զորավարների հրամանատարությամբ, վերջապես, պիտի խոսվեր կոտորածի ու կորուստների մասին. ինչպես այդ բոլորը մենք տեսնում ենք 451 թ. և մյուս ապստամբությունների ժամանակ։ Ակրյուրներում մենք տեսնում ենք հակառակ պատկեր։ «Յորժամ սպանին զՍուրէն մարզպան՝ ի նմին ամի եկն Վարդան Վշնասպ ոմն, և գործ ինչ ոչ կարայ գործել. եկաց ամ մի և գնաց»,— վկայում է Սեբեոսը[51]։ Այնուհետև ապստամբների դեմ, նույն պատմիչի ասե-

---

46 Նույն տեղում, էջ 264։ Միխայել Ասորին այս դեպքերի պատմությունն ընդօրինակել է VI—VII դդ. ասորի միաբնակ հոգևորական Կիր Բատնեցու «եկեղեցական պատմություն»-ից, մի հանգամանք, որը նրա տեղեկությանը, կարելի է ասել, տալիս է ժամանակակից գրողի վկայության արժեք։ Տե՛ս А. П. Дьяконов, Кир Батнский. С. Петербург, 1912. էջ 6։

47 Евагр, էջ 257։

48 Ю. Кулаковский, История Византии, т. II, էջ 383։

49 Н. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII веков. М.—Л., 1946, էջ 61։

50 Համա. Գյուտերբոր, Բյուզանդիոն և Պարսկաստան, էջ 144—149։ Նաև E. Stein. նշվ. աշխ., էջ 24 և հտ.։

51 Սեբեոս. էջ 30։

լով, մեծ զորքով արշավել են Միհրան Միհրևանդակ նշանավոր զորավարը, Փիլիպպոս, Սիւնաց տէր»-ը, Խոսրով Ա արքան, որոնք բոլորը պարտվել են ու գլխիկոր վերադարձել Պարսկաստան։ Ապստամբության ընթացքի մասին ընդհանուր առմամբ համանման տեղեկություն է հաղորդում նաև Հովհաննես Եփեսացին։ Վերջինիս ասելով մարզպան Սուրենի սպանությունից հետո Հայաստանում տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտերում «...պարսիկները շատ անդամ հաղթվեցին և նրանցից խլվեցին փղերը»[52]։ Այս բոլորը, ինչպես տեսնում ենք, ցույց է տալիս, որ ապստամբությունը չի ճնշվել և պայքարը շարունակվել է։

Արևելյան Հայաստանում պարսիկներին ջախջախելուց հետո, երբ տեսնում են, որ Պարսկաստանի դեմ սկսվում է դաժան պատերազմ, բոլոր հնարավոր անակնկալներից խուսափելու, իրենց ու իրենց ընտանիքների համար ապահովություն ստեղծելու նպատակով կաթողիկոսը, շատ եպիսկոպոսներ, նախարարներ ու ազնվականներ փոխադրվում են Բյուզանդիա։ «Երբ այդ բոլորը տեղի ունեցավ,— հաղորդում է Հովհաննես Եփեսացին,— և Մեծ Հայքի ամբողջ մարզը տեսավ, որ անօրեն պարսկական պետության հետ իրենց դեմ ծագեց դժվարին պատերազմ. հավաքվեց ամբողջ քրիստոնյա մարզը։ Նրանք վախեցան և ապաստան որոնեցին քրիստոնյա պետության մոտ, ասելով. «Այսուհետև մենք քրիստոնյա պետության ստրուկներն ենք և մենք փախանք, որպեսզի թաքնվենք հոռոմների պետության մեջ՝ մոգության վայրագությունից փրկվելու համար»[53]։ Որ ապստամբ նախարարներն իրենց ենթակա բնակչության հետ միասին ուղղակի մտել են Բյուզանդիայի հպատակության տակ, երևում է նաև այլ պատմիչների վկայություններից[54]։ Ոչ մի խոսք ապստամբության ճնշման մասին։

Արևելյան Հայաստանում կազմակերպված նախարարական կանոնավոր զորագնդերը, միացած բյուզանդական օժանդակ զորքի հետ, մասնակցում են ծայր առած պատերազմական գործողություններին։ Կայսրությունը հայ-բյուզանդական դաշինքը վերջին հաշվով ծառայեցրեց իր նվաճողական քաղաքականությանը Մերձավոր Արևելքում. Արևելյան Հայաստանը ներքաշեց պատերազմի մեջ և այնտեղի նախարարական զինական ուժերը լայնորեն օգտագործեց Պարսկաստանի դեմ։ Հայերի ապստամբությունը կուլ գնաց պարսկա-բյուզանդական պատերազմին։

Կայսրությունը չապահովեց նաև հայերի դավանանքի ազատությունը։ Նրանք, ազատվելով պարսկական կռապաշտության ճնշումից, ընկնում են բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցու բռնադատության տակ։ Ապստամբությունից քիչ հետո Կ. Պոլիս մեկնած Հովհաննես Բ կաթողիկոսը, եպիսկոպոսները, նախարարները և ազնվականները Հուստինոս կայսեր պահանջով ստիպված համաձայնվում են կայսրության հետ եկեղեցական միաբանության[55],

---

52 Иоанн Ефесский, էջ 112։

53 Նույն տեղում, էջ 111։

54 Հովհաննես Բիկլարեցի, Monum. Germ. hist., t. XI, էջ 211, հմմտ. Th. Byzant. էջ 448։ Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 85. հմմտ. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860. էջ 45, և այլն։

55 Иоанн Ефесский, էջ 112։ Narratio de rebus Armeniae (տե՛ս Migne, Patrologia Graeca, t. 127, էջ 892։ Փոտ (տե՛ս „Православный Палестинский сборник",

չնայած Հայաստանում չընդունվեց ու խիստ դատապարտվեց դավանական՝ այդ գործարքը, որը հակասում էր հայ ազգային եկեղեցու ավանդներին։

Հայ-բյուզանդական դաշինքի միակ պարտավորությունը, որը կայսրությունը ստանձնել էր և հետևողականորեն կատարեց, դա այն էր, որ Կ. Պոլսում ապաստանած ապստամբության ղեկավարներին չհանձնեց պարսիկների ձեռքը, չնայած վերջիններս համառորեն պահանջում էին նրանց՝ պարսկա-բյուզանդական սահմանում կախելու համար[56]։

Պարսկա-բյուզանդական պատերազմը մեծ ավերածություններ գործեց ու մարդկային հսկայական զոհեր խլեց Հայաստանում։ Հայերն աստիճանաբար կորցնում են պարսիկների դեմ հաղթանակի հույսը և հավատը Բյուզանդիայի նկատմամբ։ Նորից ծայր են առնում երկպառակությունները, և հայ-բյուզանդական համագործակցությունը թուլանում է, որից օգտվում են պարսիկները և 577 թ. աշնանը նորից գրավում ամբողջ Արևելյան Հայաստանը։ Դրանով էլ վերջ է տրվում հայ-բյուզանդական դաշինքին։

АРМЯНО-ВИЗАНТИЙСКИЙ СОЮЗ ПРОТИВ ИРАНА (VI ВЕК)

В. К. ИСКАНЯН

(Резюме)

Армяно-византийский союз (570 г.) сыграл большую роль в восстании Восточной Армении против Ирана и в возникновении персидско-византийской войны (572—590).

Византийская империя, которая находилась тогда в состоянии кризиса, вошла в союз и с армянами, но отнюдь не для защиты интересов армян, а в целях разрешения своих противоречий с Ираном. Предположение ряда историков о том, что якобы империя обязалась этим союзом восстановить царскую власть в Армении (Э. Штайн, Я. Манандян и др.), по нашему мнению, следует считать неправдоподобным. Ошибаются и те исследователи, которые находят, будто Византия непосредственно не помогла армянам и что персам удалось очень скоро подавить восстание армян (К. Гютербок, Э. Штайн и др.). Империя посредством союза сумела восставших нахараров вовлечь в войну, используя их военные силы против Ирана.

т. XI, вып. 1, СПб, 1892, էջ 181—182։ Արսեն Ասփարեցի (տե՛ս Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա, էջ 42), Ստեփանոս Ասողիկ, էջ 85։

[56] Տե՛ս Менандр, էջ 427, 411։